ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«10» հունիսի 2020 թվական

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 8/5

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՒԹԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՆԻՍՏԻ

ՆԻՍՏԸ ԱՐՁԱՆԱԳՐՈՒՄ է աշխատակազմի քարտուղարի ժ/պ Կ.Բադալյանը:
ՆԻՍՏԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԵՆ Գյումրի համայնքի ավագանու թվով 22 (քսաներկու) անդամներ՝
Ս.Բալասանյանը, Ա.Ադամյանը, Հ.Կարապետյանը, Լ.Խաչատրյանը, Տ.Հովհաննիսյանը, Մ.Սահակյանը, Լ.Սանոյան, Վ.Հունանյանը, Տ.Փանոսյանը, Կ.Միքայելյանը, Գ.Գրիգորյանը, Ա.Խաչատրյանը, Ա.Աղանյանը, Ռ.Սարգսյանը, Ս.Մարտիրոսյանը, Հ.Եղիազարյանը, Ա.Վարդանյանը, Ա.Խաչատրյանը, Գ.Մաթևոսյանը, Հ.Պողոսյանը, Ա.Ղարաղազարյանը, Ա.Առաքելյանը, որոնց գրանցման արդյունքների վերաբերյալ հայտարարությամբ հանդես եկավ աշխատակազմի քարտուղարի ժ/պ Կ.Բադալյանը:

ԼՍԵՑԻՆ.
1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՈՒԹԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 20
դեմ – 0
ձեռնպահ – 0
ՈՐՈՇԵՑԻՆ.
Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու ութերորդ նստաշրջանի հերթական հինգերորդ նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:
Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.
2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի N 234-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 22
դեմ – 0
ձեռնպահ – 0

Համայնքի ավագանու անդամներ Անդրանիկ Խաչատրյանը և Արտյոմ Ղարաղազարյանը քվեարկությանը մասնակցեց օրակարգի 2-րդ հարցից:

ՈՐՈՇԵՑԻՆ.

1.Գյումրի համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 20-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի 2020 թվականի բյուջեն հաստատելու մասին» Ն 234-Ն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի 2-րդ, 3-րդ. 4-րդ հատվածները շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն համապատասխանաբար NN 1,2,3 հավելվածների:

2. Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ կատարել համապատասխան փոփոխություններն՝ օրենքով սահմանված կարգով:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՎԱՐՏԱԿԱՆ ԽՄԲԵՐԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՊԱՅՈՒՍԱԿՆԵՐ ԵՎ ԳՐԵՆԱԿԱՆ ՊԻՏՈՒՅՔՆԵՐ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 22
դեմ – 0
ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1.Հատկացնել 3 500 000 (երեք միլիոն հինգ հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ Գյումրու համայնքային ենթակայության նախադպրոցական ուսումնական հաստատությունների ավարտական խմբերի և սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների համար դպրոցական պայուսակներ և գրենական պիտույքներ ձեռք բերելու նպատակով:

2.Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2020 թվականի բյուջեի 10/7/1 գործառական դասակարգման (4261) «Գրասենյակային նյութեր» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

4. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ «ԳՅՈՒՄՐՈՒ ՕՐ» ԱՄԵՆԱՄՅԱ ՏՈՆԱԿԱՏԱՐՈՒԹՅԱՆԸ ՆՎԻՐՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 22
դեմ – 0
ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Գյումրի համայնքի «Գյումրու օր» ամենամյա տոնակատարությանը նվիրված միջոցառումների կազմակերպման և անցկացման նպատակով հատկացնել 8000000 (ութ միլիոն) Հայաստանի Հանրապետության դրամ:
2. Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2020 թվականի բյուջեի 8/6/1 գործառական դասակարգման (4861) «Այլ ծախսեր» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

5. ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԹՎՈՎ 118 (ՄԵԿ ՀԱՐՅՈՒՐ ՏԱՍՆՈՒԹ) ԱՆՁԱՆՑ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 22
դեմ – 0
ձեռնպահ – 0
ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Թվով 118 (մեկ հարյուր տասնութ) անձանց կանխիկ հատկացնել 1 580 000 (մեկ միլիոն հինգ հարյուր ութսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2020 թվականի բյուջեի 10/7/1 գործառական դասակարգման (4729) «Այլ նպաստներ բյուջեից» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

6. ՍՈՒՍԱՆՆԱ ՂԱԶԱՐՅԱՆԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 22
դեմ – 0
ձեռնպահ – 0
ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Սուսաննա Ղազարյանին որպես դրամական օգնություն հատկացնել 200 000 (երկու հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:
2. Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2020 թվականի բյուջեի 10/7/1 գործառական դասակարգման (4729) «Այլ նպաստներ բյուջեից» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

7. ՍՄԲԱՏ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 21
դեմ – 0
ձեռնպահ – 0

Համայնքի ավագանու անդամ Հենրիկ Պողոսյանը չմասնակցեց օրակարգի 7-րդ հարցի Քվեարկությանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Սմբատ Խաչատրյանին որպես դրամական օգնություն հատկացնել 102 000 (մեկ հարյուր երկու հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:

2. Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2020 թվականի բյուջեի 10/7/1 գործառական դասակարգման (4729) «Այլ նպաստներ բյուջեից» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

8. ՄԱՐԻՆԵ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 22

դեմ – 0

ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Մարինե Ալեքսանյանի ընտանիքին որպես դրամական օգնություն հատկացնել 200 000 (երկու հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:

2. Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ սույն որոշման առաջին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2020 թվականի բյուջեի 10/7/1 գործառական դասակարգման (4729) «Այլ նպաստներ բյուջեից» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

9. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐՈՒ «ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՆՈՐ ԳՈՒՅՔ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 22

դեմ – 0

ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. «Կենտրոնական գրադարան» համայնքային ոչ առևտրային կազմակերպության համար նոր գույք ձեռք բերելու նպատակով հատկացնել 2 000 000 (երկու միլիոն) Հայաստանի Հանրապետության դրամ՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսա-տնտեսագիտական բաժնի պետին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2020 թվականի բյուջեի 8/1/1 գործառական դասակարգման (5122) «Վարչական սարքավորումներ» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

10. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՆՕՐԵՆԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Կ.ԲԱԴԱԼՅԱՆ)

Գյումրի համայնքի ավագանու անկախ անդամներից Ավետիս Առաքելյանը առաջարկեց թեկնածուների ցուցակում ներգրավել նաև անկախ ավագանիներից: Ցանկում ներառվելու համար Իրավական հարցերի մշտական գործող հանձնաժողովի նիստի ժամանակ նման առաջաջարկությամբ հանդես է եկել նաև Արտյոմ Ղարաղազարյանը:

Համայնքի ղեկավարը՝ նախագծի հեղինակը, համաձայնեց և առաջարկեց նախագծում ներառել ավագանու բոլոր չորս անխախ անդամների թեկնածությունները, որպեսզի հետագայում նրանք հնարավորություն ունենան ընդգրկելու հանձնաժողովների կազմերում:

Քվեարկության դրվեց նախագծի լրամշակված տարբերակը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 22

դեմ – 0

ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների տնօրենի թափուր պաշտոն զբաղեցնելու մրցութային հանձնաժողովներում ընդգրկվող Գյումրի համայնքի ավագանու անդամների հետևյալ թեկնածությունները՝
   1) Լոլյա Խաչատրյան,
   2) Տիգրան Հովհաննիսյան,
   3) Մխիթար Սահակյան,
   4) Լուսինե Սանոյան,
   5) Կարինե Թաթարյան,
   6) Սուսաննա Աստոյան,
   7) Հասմիկ Եղիազարյան,
   8) Արմենուհի Վարդանյան,
   9) Գրիգոր Մաթևոսյան,
   10) Արտյոն Ղարաղազարյան,
   11) Ավետիս Առաքելյան,
   12) Հենրիկ Պողոսյան:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

11. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐՆ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԱՃՈՒՐԴԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 18

դեմ – 0

ձեռնպահ – 4 (Ս.Մարտիրոսյան, Հ.Եղիազարյան, Ա. Վարդանյան, Ա. Խաչատրյան)

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող, կառուցապատման նպատակով առանձնացված հողամասերն օտարել աճուրդով և հաստատել աճուրդի մեկնարկային գներն ու պայմանները՝ համաձայն հավելվածի:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

12. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳԵՐՑԵՆԻ ՓՈՂՈՑ N 2/13 ՀԱՍՑԵԻ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔՆ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԱՃՈՒՐԴԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 22
դեմ – 0
ձեռնպահ – 0
ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Աճուրդով օտարել Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 24062019-08-0020 վկայական) Գերցենի փողոց N 2/13 հասցեի անշարժ գույքը՝ 28,33 (քսանութ ամբողջ երեսուներեք հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով խորդանոցը և կառուցապատման ու սպասարկման համար զբաղեցրած 08-001-0346-0124 կադաստրային ծածկագրով, բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակությամբ 0.033204 (զրո ամբողջ երեսուներեք հազար երկու հարյուր չորս միլիոներորդական) հեկտար մակերեսով հողամասը:
2. Հիմք ընդունելով «Ա.Գ. Էսթեյթ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության սույն որոշման 1-ին կետում նշված անշարժ գույքի շուկայական արժեքի գնահատման վերաբերյալ 2020 թվականի մայիսի 18-ի N 05182016 հաշվետվությունը՝ սահմանել անշարժ գույքի աճուրդի մեկնարկային գին՝ 3 000 000 (երեք միլիոն) Հայաստանի Հանրապետության դրամ:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

12. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԵՐԵՎԱՆՅԱՆ ԽՃՈՒՂԻ N 117/7 ՀԱՍՑԵԻ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔՆ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԱՃՈՒՐԴԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 22
դեմ – 0
ձեռնպահ – 0
ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Աճուրդով օտարել Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 07122015-08-0027 վկայական) Երևանյան խճուղի N 117/7 հասցեի անշարժ գույքը՝ 239,98 (երկու հարյուր երեսունինը ամբողջ ինսունութ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հիմքը և կառուցապատման ու սպասարկման համար զբաղեցրած 08-001-1171-0004 կադաստրային ծածկագրով, բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակությամբ 0.034128 (զրո ամբողջ երեսունչորս հազար հարյուր քսանութ միլիոներորդական) հեկտար մակերեսով հողամասը:
2. Հիմք ընդունելով «Ա.Գ. Էսթեյթ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության սույն որոշման 1-ին կետում նշված անշարժ գույքի շուկայական արժեքի գնահատման վերաբերյալ 2020 թվականի մայիսի 18-ի N 05182017 հաշվետվությունը՝ հաստատել անշարժ գույքի աճուրդի մեկնարկային գին՝ 5 200 000 (հինգ միլիոն երկու հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:

(Զեկուցող՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

14. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀԻ ՓՈՂՈՑ N 26/11 ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍԸ ՄՐՑՈՒՅԹՈՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ՉԱՓ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 22
դեմ – 0
ձեռնպահ – 0
ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 13052020-08-0034) Գարեգին Նժդեհի փողոց N 26/11 հասցեի 0,004853 (զրո ամբողջ չորս հազար ութ հարյուր հիսուներեք միլիոներորդական) հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, ընդհանուր օգտագործման գործառնական նշանակությամբ հողամասը (կադաստրային ծածկագիր 08-001-0654-0060) մրցույթով կառուցապատման իրավունքով 15 (տասնհինգ) տարի ժամկետով տրամադրել օգտագործման՝ աստիճանահարթակ կառուցելու նպատակով:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի մրցույթի վարձավճարի մեկնարկային չափ սահմանել՝ տարեկան 50 000 (հիսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

15. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՐԿՈՒ ՓՈՂՈՑԻ N 48/6 ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍԸ ՄՐՑՈՒՅԹՈՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ՉԱՓ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 22
դեմ – 0
ձեռնպահ – 0
ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող Գորկու փողոց N 48/6 հասցեի 0,0102 (զրո ամբողջ հարյուր երկու տասհազարերորդական) հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, ընդհանուր օգտագործման գործառնական նշանակությամբ հողամասը մրցույթով կառուցապատման իրավունքով 5 (հինգ) տարի ժամկետով տրամադրել օգտագործման՝ բացօթյա սրճարան կազմակերպելու նպատակով:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի մրցույթի վարձավճարի մեկնարկային չափ սահմանել՝ տարեկան 1 000 000 (մեկ միլիոն) Հայաստանի Հանրապետության դրամ:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

16. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՍԵՎԵՐՍԿԻ ԹԱՂԱՄԱՍ N80 ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍԸ ՄՐՑՈՒՅԹՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ՉԱՓ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 22

դեմ – 0
ձեռնպահ – 0
ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող Սևերսկի թաղամաս N 80 հասցեի (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N07052020-08-0007) բնակավայրերի նպատակային նշանակության հողերի ընդհանուր օգտագործման գործառնական նշանակության 0,6 (զրո ամբողջ վեց տասնորդական) հեկտար մակերեսով հողամասը (այսուհետ՝ հողամաս) (կադաստրային ծածկագիր 08-001-0261-0092) մրցույթով տրամադրել վարձակալության իրավունքով օգտագործման՝ բարեկարգման և կանաչապատման նպատակով:
2. Հողամասը վարձակալության իրավունքով տրամադրման մրցույթի մեկնարկային վարձավճարի չափ սահմանել՝ տարեկան 70 000 (յոթանասուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:
3. Հողամասի վարձակալության ժամկետ սահմանել 5 (հինգ) տարի:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

17. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՇՏՈՅԱՆ ՓՈՂՈՑ N 26/5 ՀԱՍՑԵԻ 916,26 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՄԱՅՆՔԱՊԱՏԿԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 21
դեմ – 1 (Ա.Վարդանյան)
ձեռնպահ – 0
ՈՐՈՇԵՑԻՆ.

1.Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վկայական N 11052019-08-0064) Կոշտոյան փողոց N 26/5 հասցեի 916,26 (ինը հարյուր տասնվեց ամբողջ քսանվեց հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասը սպասարկման օբյեկտ կառուցելու նպատակով ուղղակի վաճառքի միջոցով օտարել Գյումրի համայնքի բնակիչ Սուրեն Պետյայի Մարտիրոսյանին՝ աճուրդի պայմաններում սահմանված 1370000 (մեկ միլիոն երեք հարյուր յոթանասուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ մեկնարկային գնով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Սուրեն Պետյայի Մարտիրոսյանին պատշաճ կարգով իրազեկման օրվան հաջորդող օրվանից:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

18. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԹԲԻԼԻՍՅԱՆ ԽՃՈՒՂԻ N 2/19 ՀԱՍՑԵԻ 992,13 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՔԱՂԱՔԱՑԻ ԳՅՈՒԼԻԶԱՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՀԱՑԻԿԻ ԽՃՈՒՂԻ N 5/1 ՀԱՍՑԵԻ 992,13 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԵՏ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 22
դեմ – 0
ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Տալ համաձայնություն Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող Թբիլիսյան խճուղի N 2/19 հասցեի 992,13 (ինը հարյուր իննսուներկու ամբողջ տասներեք հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը քաղաքացի Գյուլիզար Հարությունյանին սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Հացիկի խճուղի N 5/1 հասցեի 992,13 (ինը հարյուր իննսուներկու ամբողջ տասներեք հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասի հետ փոխանակության միջոցով օտարելուն:
2. Օրենքով սահմանված կարգով կնքել հողամասերի փոխանակության մասին պայմանագիր:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

19. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑՈՒ ՓՈՂՈՑ N 50/7 ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍԸ «ԱՐԹՈՒՐ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀՈՒՆԱ-ՀՌՈՄԵԱԿԱՆ ԸՆԲՇԱՄԱՐՏԻ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՄԱՐԶԱԴՊՐՈՑ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 22

դեմ – 0

ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող Մովսես Խորենացու փողոց N 50/7 հասցեի 0,448235 (զրո ամբողջ չորս հարյուր քառասունութ հազար երկու հարյուր երեսունհինգ միլիոներորդական) հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասը 99 (իննսունինը) տարի ժամկետով անհատույց օգտագործման տրամադրել «Արթուր Ալեքսանյանի անվան հունա-հռոմեական ընբշամարտի մանկապատանեկան մարզադպրոց» համայնքային ոչ առևտրական կազմակերպությանը՝ մարզադպրոց կառուցելու նպատակով:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

20. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑՈՒ ՓՈՂՈՑ N 50/6 ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍԸ «ԱՐԹՈՒՐ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀՈՒՆԱ-ՀՌՈՄԵԱԿԱՆ ԸՆԲՇԱՄԱՐՏԻ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՄԱՐԶԱԴՊՐՈՑ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 22

դեմ – 0

ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող Մովսես Խորենացու փողոց N 50/6 հասցեի 0,711252 (զրո ամբողջ յոթ հարյուր տասնմեկ հազար երկու հարյուր հիսուներկու միլիոներորդական) հեկտար

մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասը 99 (իննսունինը) տարի ժամկետով անհատույց օգտագործման տրամադրել «Արթուր Ալեքսանյանի անվան հունա-հռոմեական ընբշամարտի մանկապատանեկան մարզադպրոց» համայնքային ոչ առևտրական կազմակերպությանը՝ մարզադպրոց կառուցելու նպատակով:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

21. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՂԱՐՍԻ ԽՃՈՒՂԻ 1-ԻՆ ՆՐԲԱՆՑՔ N 4 ՀԱՍՑԵԻ ՍՈՑԻԱԼ-ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ԹԱՓԱՌՈՂ ՇՆԵՐԻ ՎՆԱՍԱԶԵՐԾՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ՝
կողմ – 22
դեմ – 0
ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող Ղարսի խճուղի 1-ին նրբանցք N 4 հասցեի հասարակական նշանակության 237,97 (երկու հարյուր երեսունյոթ ամբողջ իննսունյոթ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով սոցիալ-կենցաղային շինությունը և առանձնացված 500 (հինգ հարյուր) քառակուսի մետր հողամասը տրամադրել ժամանակավոր անհատույց օգտագործման՝ շինության վերականգնման և թափառող կենդանիների վնասազերծման ծառայություններ կազմակերպելու նպատակով:
2. Առաջարկել Գյումրի համայնքի ղեկավարին՝ սույն որոշման 1-ին կետում նշված շինությունն ու հողամասը ժամանակավոր անհատույց օգտագործման տրամադրել թափառող շների վնասազերծման հարցերով զբաղվող, մասնագիտացված և համապատասխան տեխնիկական միջոցներով ապահովված բարեգործական հիմումքներով գործող կազմակերպություններից լավագույն պայմաններով ծրագիր ներկայացնողին:
3. Շինության վերակառուցման և թափառող շների վնասազերծման ծառայություններ մատուցելու պայմաններն ու պահանջները մանրամասնել պայմանագրերով:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

22. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 19-Ի N 20-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 22
դեմ – 0
ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2018 թվականի փետրվարի 19-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարին կից, հասարակական կարգով գործող թվով 3 (երեք)

խորհրդակցական մարմինների կազմերը հաստատելու մասին» N20-Ա որոշմամբ հաստատված N2 հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունը.

հավելվածի 7-րդ տողում «Լևոն Մինասյան» բառերը փոխարինել «Աշոտ Միրզոյան» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

23. ՎԱՐԴԳԵՍ ԲԱԳՐԱՏԻ ԱՐԾՐՈՒՆՈՒՆ ՀԵՏՄԱՀՈՒ «ԳՅՈՒՄՐՈՒ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑԻ» ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 22

դեմ – 0

ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Վարդգես Բագրատի Արծրունուն հետմահու շնորհել «Գյումրու պատվավոր քաղաքացի» կոչում:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

24. ՄՀԵՐ ՄՈՒՇԵՂԻ ՄԿՐՏՉՅԱՆԻՆ ՀԵՏՄԱՀՈՒ «ԳՅՈՒՄՐՈՒ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑԻ» ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Ռ.ԱՍԱՏՐՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 22

դեմ – 0

ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Միհեր Մուշեղի Մկրտչյանին հետմահու շնորհել «Գյումրու պատվավոր քաղաքացի» կոչում:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում է հրապարակմանը հաջորդող օրվանից:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

25. 2019 ԵՎ 2020 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՇԽԱՐՀԻ ԵՎ ԵՎՐՈՊԱՅԻ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՉԵՄՊԻՈՆ ԴԱՐՁԱԾ ԳՅՈՒՄՐԵՑԻ ՄԱՐԶԻԿՆԵՐԻՆ ԵՎ ՆՐԱՆՑ ՄԱՐԶԻՉՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՊԱՐԳԵՎՆԵՐ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Մ.ՂԱԶԱՐՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 22

դեմ – 0

ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. 2019 և 2020 թվականների ընթացքում աշխարհի և Եվրոպայի առաջնություններում չեմպիոն դարձած գյումրեցի մարզիկներին և նրանց մարզիչներին շնորհել դրամական պարգևներ 6 000000 (վեց միլիոն) Հայաստանի Հանրապետության դրամի չափով՝ համաձայն հավելվածի:

2. Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի

հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2020 թվականի բյուջեի 8/1/1 գործառական դասակարգման (4729) «Այլ նպաստներ բյուջեից» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

26. 2019 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՇԽԱՐՀԻ, ԵՎՐՈՊԱՅԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԱՌԱՎԵԼ ԲԱՐՁՐ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՍԱԾ ԳՅՈՒՄՐԵՑԻ ՄԱՐԶԻԿՆԵՐԻ ՄԱՐԶԻՉՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՊԱՐԳԵՎՆԵՐ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Մ.ՂԱԶԱՐՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 22

դեմ – 0

ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. 2019 թվականի ընթացքում աշխարհի, Եվրոպայի և Հայաստանի Հանրապետության առաջնություններում չեմպիոններ և մրցանակակիրներ պատրաստած գյումրեցի մարզիչներին շնորհել դրամական պարգևներ՝ 6 972 000 (վեց միլիոն ինը հարյուր յոթանասուներկու հազար) Հայաստանի Հանրապետության դրամի չափով՝ համաձայն հավելվածի:

2.Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված գումարից 3 486 000 (երեք միլիոն չորս հարյուր ութսունվեց հազար) Հայաստանի Հանրապետության դրամը վճարել 2020 թվականի հուլիս ամսին, իսկ մնացած 3 486 000 (երեք միլիոն չորս հարյուր ութսունվեց հազար) Հայաստանի Հանրապետության դրամը՝ 2020 թվականի դեկտեմբեր ամսին,

2) սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2020 թվականի բյուջեի 8/1/1 գործառական դասակարգման (4727) «Կրթական, մշակութային և սպորտային նպաստներ բյուջեից» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

27. ՔԱՂԱՔԱՑԻ ԱՐՏՅՈՄ ՍԱՄՎԵԼԻ ՄՈՎՍԻՍՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Ս.ՋԱՆՈՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 22

դեմ – 0

ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1.Սահմանել արտոնություն քաղաքացի Արտյոմ Սամվելի Մովսիսյանին սեփականության իրավունքով պատկանող տրանսպորտային միջոցի 2020 թվականի գույքահարկի գումարի նկատմամբ՝ ազատելով գույքահարկի 50450 (հիսուն հազար չորս հարյուր հիսուն) Հայաստանի Հանրապետության դրամ գումարի վճարումից:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Սամվել Սարգսի Մովսիսյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

28. ՔԱՂԱՔԱՑԻ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՎԵՏԻՔԻ ՇԵԿՈՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Ս.ՋԱՆՈՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 22
դեմ – 0
ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1.Սահմանել արտոնություն քաղաքացի Հովհաննես Ավետիքի Շեկոյանին սեփականության իրավունքով պատկանող տրանսպորտային միջոցի 2020 թվականի գույքահարկի գումարի նկատմամբ՝ ազատելով գույքահարկի 60200 (վաթսուն հազար երկու հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ գումարի վճարումից:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հովհաննես Ավետիքի Շեկոյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

29. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԹՎՈՎ 18 (ՏԱՍՆՈՒԹ) ՀԱՄԱՏԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՍՈՒԲՍԻԴԻԱ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Մ.ԴԱՎԹՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 22
դեմ – 0
ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Գյումրի համայնքի թվով 18 (տասնութ) համատիրությունների սպասարկման տարածքներում գտնվող բազմաբնակարան շենքերի տանիքների, մուտքերի, դռների պատուհանների և կոյուղագծերի վերանորոգման նպատակով հատկացնել սուբսիդիա՝ 29 400 000 (քսանինը միլիոն չորս հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամի չափով՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնարարել ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2020 թվականի բյուջեի 6/6/1 գործառական դասակարգման (4521) ‹‹Սուբսիդիաներ ոչ պետական ոչ ֆինանսական կազմակերպություններին›› տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

30. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 10-Ի N 47-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Կ.ՄԽՉՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 22
դեմ – 0
ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2020 թվականի ապրիլի 10-ի «Հայաստանի Հանրապետության համայքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենիցա ստանալու և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի «Գյումրի քաղաքի 18 երկրորդային փողոցների հիմանորոգում» սուբվենցիայի հայտին համաձայնություն տալու մասին» N 47-Ա որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) վերնագրում և 1-ին կետում «18» թիվը փոխարինել «17» թվով, իսկ նախաբանում «տասնութ» բառը՝ «17» թվով,
2) 2-րդ կետի 1-ին ենթակետի «921 389 100 (ինը հարյուր քսանմեկ միլիոն երեք հարյուր ութսունինը հազար հարյուր դրամ)» և «414 625 095 (չորս հարյուր տասնչորս միլիոն վեց հարյուր քսանհինգ հազար իննսունհինգ)» թվերն ու բառերը փոխարնել համապատասխանաբար՝ «965 781 515 (ինը հարյուր վաթսունհինգ միլիոն յոթ հարյուր ութսունմեկ հազար հինգ հարյուր տասնհինգ)» և «434 601 682 (չորս հարյուր երեսունչորս միլիոն վեց հարյուր մեկ հազար վեց հարյուր ութսուներկու)» թվերով և բառերով,
3) որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի,
4) որոշման 3-րդ կետի «ընդունման հաջորդ» բառերը փոխարինել «պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող» բառերով:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

31. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ «ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԱՅԳԻՆԵՐՈՒՄ ՈՒ ՊՈՒՐԱԿՆԵՐՈՒՄ ՆՍՏԱՐԱՆՆԵՐԻ, ԽԱՂԱՀՐԱՊԱՐԱԿՆԵՐԻ ԳՈՒՅՔԻ, ԱՂԲԱՄԱՆՆԵՐԻ ՈՒ ՄԵՏԱՂԱԿԱՆ ԿՈՆՏԵՅՆԵՐՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՈՒՄ ՈՒ ՏԵՂԱԴՐՈՒՄ» ՍՈՒԲՎԵՆՑԻՈՆ ՀԱՅՏԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 10-Ի N 48-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Կ.ՄԽՉՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 22
դեմ – 0
ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1.Տալ համաձայնություն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի «Գյումրի քաղաքի այգիներում ու պուրակներում նստարանների, խաղահրապարակների գույքի, աղբամանների ու մետաղական կոնտեյներների ձեռքբերում և տեղադրում» (այսուհետ՝ ծրագիր) սուբվենցիոն հայտին՝ համաձայն հավելվածի:

2. Սահմանել, որ ծրագրի իրականացման հետ առնչվող այլ փաստաթղթերի ստորագրումը, դրանից բխող գործառույթների կազմակերպումն իրականացնում է Գյումրի համայնքի ղեկավարը:

3. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի «Գյումրի քաղաքի Վարդանանց հրապարակի շատրվանների արդիականացում, այգիներում ու պուրակներում նստարանների, աղբամանների պատրաստում ու տեղադրում և հասարակական զուգարանների կառուցում» սուբվենցիայի հայտին համաձայնություն տալու մասին» թիվ N 48-Ա որոշումը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

32. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ԻՆԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Ս. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 22
դեմ – 0
ձեռնպահ – 0
ՈՐՈՇԵՑԻՆ.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու հերթական իներորդ նստաշրջանի առաջին նիստի գումարման օր սահմանել 2020 թվականի սեպտեմբերի 08-ը:

Որոշումն ընդունվեց

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանի

Ս. Բալասանյան _____

Ա. Ադամյան _____

Հ. Կարապետյան _____

Լ. Խաչատրյան _____

Տ. Հովհաննիսյան _____

Մ. Սահակյան _____

Լ. Սանոյան _____

Վ. Հունանյան _____

Կ. Միքայելյան _____

Տ. Փանոսյան _____

Գ. Գրիգորյան _____

Ա. Խաչատրյան _____

Ա. Աղանյան _____

Ռ. Սարգսյան _____

Ս.Մարտիրոսյան _____

Հ. Եղիազարյան _____

Ա.Վարդանյան _____

Ա. Խաչատրյան _____

Գ. Մաթևոսյան _____

Ա.Ղարաղազարյան_____

Հ.Պողոսյան _____

Ա. Առաքելյան _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՄՄԿԵԼ ԲԱԼԱՍԱՆՅԱՆ**

քաղաք Գյումրի
«10» հունիսի 2020 թվական